

վայսու ( )ուէանեան ցեղին գլուխը Վաղղիոյ գահը ելլելուն պէս՝ ճարտար քաղաքավարութեամբ ամէն կողմնակցութիւններն ուզելով շահիլ նախ Վաթուկոնի արձանը Սանտովի հրապարակին սեանը վրայ նորէն կանգնեց, զորն որ Պուրպոնեանք 1814 տարւոյն իրենց դարձին կործաներ էին. ետքը 1840<sup>էն</sup> Մնգղիոյ պաշտօնէից դահլձին հետ խօսակցելով՝ մեծ փառաւորութեամբ յաղթանակի հանդիսով, որուն նմանը Վաղղիա չէ տեսնուած, Սուրբ Հեղինէէն Վաթուկոնի մարմինը փոխադրել տուաւ Ռարիզ ապիկար զինուորաց անկելանոցին եկեղեցին, և հրամայեց որ վրան փառաւոր մահարձան մը կանգնուի, որն որ գրեթէ լմրնցած է հիմա :

ՏՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հին Պարտեզներու վրայ : (Երես 294)

( )տար ազգաց պարտեզներուն վրայ խօսելէն վերջը՝ հարկ է դառնալ առանձին ակնարկութիւն մ'ալ ընել մեր ազգին ունեցած ախորժակին վրայօք :

Մըւեւեան ազգաց պարտեզները միշտ հուշակաւոր եղած են պատմութեանց մէջ. մեր պատմութիւնը կը ցուցնէ մեզի որ հայք ալ այն ազգերէն մէկն են եղեր : ( )պէտ ազգային պատմիչները ամէն բան տեղն 'ի տեղը ու ճիշդ չեն ստորագրեր, մանաւանդ որ մեր այնչափ մեծամեծ նախարարութեանց հազիւ յիշատակութիւնները կան, թող թէ անոնց պարտիզաց նկարագիրները. բայց մեծամեծ թագաւորաց վրայ գալով՝ անոնց գործոցը մէջ կը յիշատակեն նաև տեղ տեղ իրենց պարտեզներու վրայ ունեցած ախորժակը, որոնք միայն բաւական են մեզի ցուցնելու մեր ազգին ալ գեղեցիկ ախորժը : Հայաստան աշխարհքը ինքնիրեն արգաւանդ և բերրի երկիր էր, որ բարերար ձեռաց պզտիկ օժանդակութիւն

մը կրնար բոլորը ծաղկեալ դրախտ մը դառնալ, ինչպէս որ ատեն ատեն եղած ալ է : Սակութիւնը իրմէ նախ սկսած է ծաւալիլ բոլոր աշխարհք. Մոյ առաջին քրտինք թափողն եղաւ հայաստանի պտղաբերութեանը, երբ դեռ ջրհեղեղին ջրերը հազիւ քաշուած՝ տապանէն ու Սասեաց գագաթէն վար իջաւ, և անոր ստորոտները սկսաւ նախ և առաջ Մկոռի գիւղը այգիներ տնկել, գինիներ հանել : Իրմէ վերջը իր որդիքն ու թոռները՝ իրենց հօրը և հաւուն ձեռացը տակ վարժած, և անոր օրինակը դիմացին, և միանգամայն հարկաւորութեան պահանջմունքէն ըստիպուած՝ իրենց հաւուն հետոցը կը հետևէին. անանկ որ որչափ մարդկութիւնը կը բազմանար հայաստան, հարկաւորութեան կրկին աստիճանէն աւելի կը յառաջադիմէր մշակութիւնը. ինչպէս նաև Սովսէս Խորենացի ալ շատ տեղ յիշատակութիւններ կ'ընէ, և մանաւանդ Շիրակ գաւառին համար կ'ըսէ՝ « արգաւանդ և բարի », ուր բնակեցաւ Շարա իր շատակեր բնութեանը պատճառաւ :

Մոյն ատենուան մշակութեան զարգացմունքը որչափ որ յայտնի է մեզի, այնչափ ալ քիչ է ծանօթութիւններ բուրաստանաց և ծաղկանոցաց վրայօք. բայց ենթադրելով ալ թէ չկային այսպիսի բուրաստաններ, որ անկարելի կ'երևայ, սակայն բնութեան մոգիչ տեսարաններուն բազմութենէն՝ գրեթէ արհեստաշէն բուրաստանաց կարօտութիւն չունէին, ինչպէս յայտնի է Խորենացւոյն խօսքերէն : Իսկ Շամիրամայ ժամանակը կ'երևայ թէ փառաւոր բուրաստաններ եղած պիտի ըլլան հայաստան. վասն զի երբ Շամիրամ հայաստան եկաւ, և երկրին գիւղը, գեղեցկութիւնը, ծաղկազարդ հովիտներն ու դաշտերը, գետերուն, վտակներուն խոխոջանքները տեսաւ՝ յափըշտակուեցաւ իր մեղկ սիրտը, և իր ամբարաստունը որոշեց հայաստան շինել, ուր տարւոյն չորրորդ մասը անցընէ : Մյս դէպքս մեծ լոյս մըն է մեզի նոյն

ժամանակուան ստոյգ ծանօթութիւն ունենալու . կը տեսնենք այս բանիս մէջ Շամիրամայ չափազանց զբօսանք, պարտէզ, զուարճութիւն սիրելը . վասն զի իր Վինուէի մէջ կանգնած հրաշա- կերտ կախաղանաւոր բուրաստանները, որոնց վրայ այսչափ դարեր կը զարմա- նան, ինքը անոնցմով չկշտացած և սիր- տը դեռ անգոհ՝ աւելի գերազանց տե- ղոյ մը ետեւէ կ'ըլլայ, տարւոյն ամե- նագեղեցիկ ժամանակը հոն ծախելու համար, մանաւանդ թէ ըսեմ՝ տեղւոյն զմայլեցուցիչ գեղեցկութիւնը կը շար- ժէ զինքը այս մտածութիւնս ունենա- լու : Բնութիւնս որ Խորենացւոյն լակոնա- կան ոճը կը զլանայ մեզի այս հոյակապ ամարաստան տեղն 'ի տեղը ու ճիշդ նկարագիրը . բայց հանդերձ իր համա- ոտութեամբը դարձեալ կ'իմացընէ անոր փառաւորութիւնն ու մեծագոր- ծութիւնը : Բայ Շամիրամակերտ ամարաստան շինութեանը համար այն- չափ հազարաւոր ընտիր գործաւորներ Խորենտանէն և զանազան աշխարհք- ներէ հոն հաւաքելէն ետքը՝ կրնայ ըն- թերցողը երևակայել անոր վեմութե- թնչ աստիճան եղած ըլլալը . ինչ կը պակսէր այնչափ վարպետ գործաւոր- ներուն ձեռքէն, որոնց մտայ ծննդեա- նը գէմ դնող ամենեւին արգելք մը չը- կար, ոչ ոսկին ու արծաթը և ոչ ճար- տարութեան պակասութիւնը . մանա- ւանդ թէ թագուհւոյն դիտմունքը, բաղձանքն ու պահանջմունքը կը ստի- պէր զիրենք ամէն կերպ գեղեցկու- թիւն և մեծագործութիւն մտածել և 'ի գործ դնել . և հարկաւ շատ աւելի գե- րազանց պիտի եղած ըլլայ քան զկախա- ղանաւոր բուրաստանները, որ ամառը զանոնք թողուցած՝ հոս գիւղագնացու- թեան կու գար : Եւ ահաւասիկ Խորե- նացին այսպէս կը ստորագրէ անոր մէջի բուրաստաններն ու պարզ բուսոց վե- րաբերեալ զարդարանքները . “ Եւ ըզ- մասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ գնացուցանէ 'ի պէտս ամենայն պիտոյից և յարբուցմունս բուրաստա- նաց և ծաղկոցաց . . . : Եւ զամենայն

արևելեան և զհիւսիսային և զհարա- ւային կողմունս քաղաքին զարդարե- ղաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց՝ զանազանեալք 'ի պտուղս և 'ի տերևս . և բազումս բազմաբերս և գինեբերս 'ի նմա տնկեաց ուլիտս : Եւ ամենայնիւ հոյակապ և հուշակա- ւոր զպարսպեալն յօրինէր՝ ” : Եւ յի- ղունւոյն այսչափ ստորագրութիւնը՝ այն փառաւոր ամարաստան համար միայն անունը յիշատակել մըն է :

Շամիրամէն վերջը ինչուան Բըրա- կունեաց կանգնումը մասնաւոր յիշա- տակութիւն մը չունինք բուրաստանաց յառաջացմանը . բայց անկարելի կ'ե- ըլլայ որ գոնէ իրմէ վերջը բուրաստան- ներու այս կերպ ախորժը մտած չըլլայ հայաստան : Եթէ իր մահուանը հետ մէկտեղ անհետացան մէկէն իր բուրաստաններն ու ծաղկանոցները . և իշխաններն ու նախարարները տեսնե- լով այնպիսի գեղեցկութիւն՝ կարելի է արգեօք, որ անտարբեր աչքով մը անոնց վրայ նայելով՝ ամենեւին անհոգ ըլլային : Բայց ենթադրելով ալ թէ Շամիրամայ հետ մէկտեղ մարած ըլ- լայ՝ հայաստանէն բուրաստաններու սե- ըրը, չենք կրնար երկբայիլ թէ Տիգրան, որ անբաւ հարստութեամբ Երուս- ձայս, “ խաղաղութեան և շինութե- բերող ”, եղաւ երկրին, Յունաստանի տիրեց և Սարաց հետ ալ այնչափ վե- րաբերութիւն ունեցաւ, այն թագաւո- րութիւններէն բերած չըլլայ այդ ա- ըրուեստին ախորժը, ուր տեղուանքը գերազանց կերպով ծաղկած էր բուրա- ստանաց մշակութիւնը : Եւր թողունք որ իրեն ժամանակին համար միայն կ'ը- սէ մեր պատմաբանից հայրը . “ Եւնե- ցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և յետոնցս ըղձալի ինքն և ժամանակ իւր ” : Եւ որովհետեւ քաղաքականութեան և յառաջադիմու- թեան մէկ գլխաւոր մասն ալ է՝ այգի- ներ, պարտէզներ, բուրաստաններ մը- շակելը, և մեծ նշան քաղաքականա-

1 Պատմութիւն Հայոց, Գիրք Ա. ԺԶ :

ցեալ ազգի մը , ուրեմն հարկ է հետե-  
ցրնելը թէ նոյն ժամանակը շատ զար-  
գացած պիտի ըլլայ բուրաստանաց մը  
չակուծիւնն ալ :

Իսկ Արշակունեաց ժամանակը թա-  
գաւորութեան կանգնուելուն հետ մէկ  
տեղ սկսած է բուրաստանաց խնամքը :  
Խորենացին Աղարշակայ քաղաքա-  
կան շինութեանց մէջ՝ կը ստորագրէ  
նաև իրեն մշակութեան և բուրաստա-  
նաց վրայ ունեցած սէրը , ըսելով .  
“ Գառնայ առ ստորոտոյն Պարխարայ  
ընդ մէջ Տայոց 'ի գիջին և 'ի մառա-  
խլուտ տեղիս մայրեացն և 'ի լուաւէտս .  
գեղեցիկ իմն կարգելով գերկիրն , հա-  
ւասարելով զլեռնայինն և զՉերմահոտն  
'ի բարեխառն և 'ի զուգագեղեցիկ  
վայելչութիւն իւրոյ թագաւորութեն .  
ամառնային ժամանակին հովանոցս պա-  
տրաստելով յորժամ զհիւսիսով երթի-  
ցէ : Գոմն գերկուս տափարակնն ան-  
տառախիտս հանդերձ լերամբքն կազ-  
մելով , և որսոց տեղիս . և զՉերմու-  
ծիւնն Արղայ 'ի մարմանդս այգեաց և  
բուրաստանեաց ” : Տարակոյս չկայ  
որ Աղարշակ պարթև և Պարթևաց  
թագաւորի եղբայր՝ Պարսկաստանի  
պարտիզաց գեղեցկութեանը նմանցու-  
ցած կ'ըլլայ իր հայաստանի բուրա-  
ստաններն ալ . մանաւանդ որ ինքը Խո-  
րենացին կը վկայէ նոյն տեղը՝ թէ միայն  
տեղերը կը նշանակեմ առանց ամենևին  
զանոնք մանրապատում ընելու : — Ի՞նձ  
յիշատակաց արժանի է իրմէ վերջը  
Արուանդայ շինած ձեռակերտը , զորն  
որ Խորենացին ալ ախորժով և աւելի  
մանր կը նկարագրէ , ըսելով . “ Քաղցր  
է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաս-  
տակերտին Արուանդակերտի , զոր յո-  
րինեաց նոյն ինքն Արուանդ գեղեցիկ  
և չքնաղ յօրինուածովք : Քանզի զվի-  
ջոց հովտին մեծի ընդ մարդկութեամբ  
և պայծառ շինուածովք , լուսաւոր որ-  
պէս ական բիբ . իսկ շուրջ զմարդկու-  
թեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց  
կազմութիւն , որպէս շուրջ զբբովն զայլ

բողորակութիւն ական : Իսկ զբազմու-  
ծիւն այգեստանոյ , իբր զարտեանաց  
խիտ և գեղեցիկ ծիր . որոյ հիւսիսային  
կողմանն դիր կարակնաձև՝ արդարև  
գեղաւոր կուսից յօնից դարևանդաց  
համեմատ : Իսկ 'ի հարաւոյ հարթու-  
ծիւն գաշտաց , ծնօտից պարզութեան  
գեղեցկութիւն . իսկ գետն բերանա-  
ցեալ դարաւանդօք արանցն՝ զերկթեր-  
թիսն նշանակէ շրթունս : Այսպիսի  
գեղեցկութեան դիր՝ անթթեղի իմն  
գոգցես 'ի բարձրաւանդակ թագաւո-  
րանիստն զհայեցուածսն ունի . և ար-  
դարև բերրի և թագաւորական դաս-  
տակերտն ” : Այս այս ստորագրած  
սքանչելի դաստակերտը մինչև Տրդա-  
տայ ժամանակը անարատ մնացած էր ,  
ինչպէս որ կը վկայէ նոյն պատմագիրը .  
և Տրդատ Վամսարականաց ցեղին ըն-  
ծայ տուաւ . ինչպիսի խնամք շտարուիր  
այնպիսի դաստակերտի մը , որ մասնա-  
ւոր անձանց ձեռքը ընծայ յանձնուի .  
անշուշտ Արուանդակերտ ալ երկայն ա-  
տեն նոյն գեղեցկութիւնը շարունակեր  
և աւելի ևս զարդարուեր է :

Արուանդայ յաջորդը Արտաշէս յետ  
հայաստանի վրայ բազմադիմի կարգա-  
ւորութիւններ ընելուն՝ կ'ըսէ Խորե-  
նացին թէ “ Հրամայէ զսահմանս գիւ-  
ղից և ագարակաց որոշել . . . : Իայց  
ասի , 'ի ժամանակս Արտաշիսի ոչ գը-  
տանել երկիր անգործ յաշխարհիս  
հայոց , ոչ լեռնային և ոչ դաշտային  
յաղագս շինութեան երկրիս ” : Այս  
աստիճան մշակութիւն կար նոյն ժա-  
մանակը հայաստանի մէջ , որ իր մեծ  
քաղաքականութիւնը կը ցուցնէ : Այս  
թէպէտ առանց ուրիշ ծանօթութեանց  
այսպիսի քաղաքականութեան և ճո-  
խութեան ժամանակ մը տեսնելով՝  
յայտնի կը հետևեցրնենք մտքով նոյն  
ատենուան բուրաստանաց ծաղկած ը-  
լլալը , բայց հաւատարիմ վկայ ալ ու-  
նինք թուովմա Արծրունին , որ Արտա-  
շիսի Ա անայ քաղաքին քով շինած թա-  
գաւորական պալատին ստորագրութիւ-

1 Գառն . հայոց , Գեղք Բ . 2 :

1 Անդ , ԽԲ : 2 Անդ , ԾԶ :

նը ընելով՝ նախ իր գեղեցիկ դիրքը կը նկարագրէ , որուն մէկ կողմէն կը տեսնուէր ձիւնապատ բարձրագագաթն Սասիս , և դիմացը դաշտաձև տարածուած կապուտակ Ռզնունեաց ծովը . ետքը կ'ըսէ . « Ղաստակերտս մեծամեծս ( շինէ ) շուրջ զեզերքն անտառախիտ ծառուլք և զինեքեր որթովք և զանազան պտղովք . զէնս պատրաստեալ , և շուրջ զամրոցպէն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս 'ի զանազան ծաղկանց , ոչ միայն 'ի տեսիլ խողտման աչաց և 'ի զուարճումն հոտոտելեաց , այլ և 'ի կազմութիւն զեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ռսկղեպեայ վարժամբն » : Ռյս Ռրտաշէս թագաւորնիս ալ 'ի մանկութենէ Պարսկաստան մեծցած ըլլալով՝ լցուած էր աչքը անոնց պարտիզաց վայելութիւններովն ու ճոխութիւններովը , զորն որ իր աշխարհաշինութեանը հետ խառնելով՝ զարդարեց ճայաստան :

Իսկ Ռագրատունեաց սկիզբը՝ Ռշոտ Ա թագաւորին ժամանակը , ինչպէս որ կը վկայեն Յովհաննէս կաթողիկոս , Ռսողիկ , Սարդան , Վիրակոս պատմագիրները , նոյնպէս շատ լաւ ծաղկած էր ճայաստանի մէջ , անանկ որ ինքը թագաւորութեան ամենայն գլխաւոր բարեկարգութիւններն ընելէն վերջը՝ սկսաւ քաղաքները , աւանները , գեղերը , տունները՝ բոլոր զարդարել , և ճայաստան ճոխութեամբ լցուց , ու ամենեւին անմշակ դատարի տեղ մը չձգեց , որով առատ և անբաւ պտուղ կը հանէին : Վարձեալ կ'ըսէ Յովհաննէս կաթողիկոս . « Օ ամենայն տափարակ տեղիս՝ ագարակս և գոմս դներ , և զմարմանդս՝ յայգիս և 'ի բուրաստանս զարդարէր » : — Վագիկ Ա թագաւորին գալով թող մեր տեղը Ռքծրունին խօսի , որ Ռթամարայ փառաւոր շինութիւնը նկարագրելէն վերջը՝ այսպէս կը շարունակէ . « Յայնժամ և իւր իսկ արքայի ամենիմաստ հասողութեամբն հանդերձ բազում արուեստաւորօք զլար ճախտարութեան 'ի ձեռն առեալ գծել ,

միանգամայն և գծագրել նշանակել առ ստորոտով լերինն որ է գագաթն կղզոյն , զտեղիս զբօսացուցանողս վայելչաւորս , ըստ արժանի կայենից արքայական իւրոցն հանգստեան ձգելով պարսպունս , յարդարելով զփողոցս , և դարս դարս դարաստանաց , և գահս ըստ գահից տէրութեանց , և բուրաստանս և պարտէզս , բուրաստանաց և ծաղկոցաց որոշեալ հովիտս , զորս վաղվաղակի ածեալ 'ի կատարումն հասուցանէ զամենայնս . ևս և ծառատունկ բազում , զոր ոռոգեալ արբուցանեն 'ի բարեհամ և անսպառ աղբերէն , որ ակնարկելովն խնամողին Ռստուծոյ կայ 'ի մէջ քաղաքին » : Օարմանք չէ որ Ռթամար կղզին , և մասնաւորապէս անոր մէջ այն հիանալի Ռստուծոյ տաճարը շինող թագաւոր՝ այսպիսի փափուկ և ընտիր ախորժ մը ցուցուցած ըլլայ բուրաստանաց վրայ ալ :

Ռյսչափ յիշատակութիւններն որ կ'ընեն մեր նախնիք տեղ տեղ իրենց գրուածոց մէջ պարտէզներու վրայ , ընդհանուր ազգին ախորժն ու բուրաստանաց լաւ ծաղկած ըլլալը յայտնի կը ցուցնեն . բայց աւաղ , ինչպէս որ վերն ըսի , միայն թագաւորաց գործքերն ու անոնց ըրածները կը պատմեն . իսկ նախարարաց վրայ ամենեւին լուրթեամբ կ'անցնին , թէպէտ և աւելի հինները նախարարութեանց վրայ ալ « անբաւ զուցաց մատենք » աւանդեր են՝ Խորենացոյն վկայութեամբ . ուր ընդ հակառակն կարելի բան չէ որ մեր ազգին քաղաքականացեալ և հարուստ ժամանակները նախարարներն ալ փառաւոր պարտէզներու տեսքը չըլլային . վասն զի կը տեսնենք որ ընդհանուր ազգին ոգոյն մէջը մշակութեան եռանդը տնկուած և միշտ արծարծ մնացած է . միանգամայն և թագաւորաց հետ զհետէ օրինակները դիմացնին՝ իրենց մեծ գրգիռ և գաղափար էր հետեւելու : Ինչպէս նաև կը տեսնենք Պարսից նախարարները , որ իւրաքանչիւր կը ջանային մէկը քան զմէկալը գերազանցել գեղեցիկութեամբ :

պարտիզաց , և ըստ մշակութեան իւրաքանչիւր սահմանաց՝ Թագաւորէն վարձ կամ պատիժ կ'ընդունէին : Եւ մեր Թագաւորութիւնն որ այնչափ մեծ վերաբերութիւն ունեցեր է Պարսից հետ , հարկաւ անոնց այս նախանձելի յառաջադիմութեան կերպը բերած են հայաստան , որով այնչափ յառաջացեր է մշակութիւնը : Եւ մանապէս մեր մեծամեծ Թագաւորաց ժամանակները , ինչպէս ըսինք Մրտաշեսի ժամանակը , որ բոլոր երկրին մէջ կտոր մը անմշակ տեղ չկար , հարկաւ Թագաւորը չէր որ ամբողջ երկրին ընդարձակութեանը հոգաբարձութիւն կ'ընէր , այլ իւրաքանչիւր տեարք նախարարաց հովանաւորութեան տակ՝ խաղաղ իրենց մշակութեանը կը պարապէին . և այս նախարարները անկարելի բան է որ առանց ամենեւին մշակութեանէ ախորժ մը առնելու այն աստիճան ետևէ ինկած ըլլան , որ բոլոր երկրին մէջ պզտիկ մաս տեղ մը անմշակ մնացած չըլլայ . ուրեմն Թէ որ կ'ընդունինք բոլոր բովանդակ հայաստանի մշակուած ըլլալը նախարարաց ձեռաց տակը , որոնք կը սիրէին մշակութիւնը , անհնարին է չհետևեցընելը Թէ տեսնելով Թագաւորին շինած բուրաստաններն ու ծաղկանոցները՝ իրենք ալ՝ ի նոյն յորդորուած չըլլան :

Եր նախարարաց աւելի որսորդութեան անտառներուն վրայ ծանօթութիւն ունինք , որ այն ալ մաս մըն է պարտիզաց . Թէպէտ այս կերպ մասնաւոր շինուած փառաւոր անտառներ շատ աւելի կը յիշուին Թագաւորաց համար , որ այն անտառներուն մէջ որսի կ'ելլէին զուարճութեան և միանգամայն պատերազմական կրթութե համար , զորոնք զանց կ'ընենք առանձնակի հոս յիշելը :

Ի այց դառնալով դարձեալ հայաստանի վրայ՝ կը տեսնենք որ ինքը երկիրը քաջալերութիւն կու տար մշակաց որ տքնին իր վրայ . և շատ տեղերու անունները միայն վկայ կ'ըլլան իրենց ծաղկուներու , բուրաստաններու անաշխատ յարմարութեանը . ինչպէս Նաղիկ գիւղը , որ Սամիկոնեանց իշխանութեան տակն

էր , որով կերպով մը կրնանք հետևեցընել յանուանէ այս նախարարութեան բուրաստաններ ունենալը . նմանապէս Նաղիկէոյ կամ Նաղիկաց լեռները , զոր Նաիրատ գետին ակունքը կ'ուղղանեն . Ինչորի և Նաղիկոտն գաւառները Մրարատայ մէջ . և նոյն իսկ ամբողջ Մրարատը ընդարձակ դրախտ մըն էր , ինչպէս մանրապատում և ճոխանալով կը նկարագրէ Վազար Վարպեցի , որուն երկար ստորագրութեան մէկ երկու կտորները գնենք . “ Եւ խորհելով զայս ամենայն Մրշակ Թագաւորն ՚ի միտս իւր՝ լքեալ մերժեալ Թողոյր զբարի և զբնիկ ժառանգութի նախնեաց իւրոց , զգաւառն Մրարատու . զհոյակապն և զհոգակաւորն և զականաւորն , զամենաբոյն , զամենաբուղին , զամենալին , զամենագիւտն ՚ի շահս և ՚ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան , զգաշտս մեծատարածս և որսալիցս , զլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտարօտս , . . . յորոց ՚ի վերուստ ՚ի կատարածն ջրոց հոսմունք անկարօտ ոռոգման՝ արբուցանելով զգաշտս մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն կանամբք արամբք և ընտանեօք զանպակասութիւն հացի և գինւոյ , զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն , և զզանազանումն իւղաբուղի սերմանցն : . . . Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն , որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բայօթէգացն ընձեռելով առողջութիւն , զօրացուցանեն զգալովութիւն խելացն և նորոգեն : Եւնգ գտանին և ազգի ազգի արմատք բուսոց ՚ի պէտս օգտակարութեան դեղոց . . . : Եւ արգ զայսպիսի զըղձակերտ գաւառ , զնաշխարհիկ և զամենալի ըստ տրւչութեան ամենախնամ արարչին Մրտուծոյ , զՄրարատեան գաւառ , որ է գլուխ աշխարհիս հայոց , զգաւառն համբաւատենչ , զգաւառն ամենալի , որ բերէ ինքեան զօրինակ լիութեան , ըստ բանի գրոյն , զերկրին Նախպատացոց , և զդրախտին Մրտուծոյ ” : Եւ

Թերցողաց կը Թողունք հոս երևակայել լը Թէ երբ Թագաւորութեան իյնալու ժամանակները այս վիճակի մէջ էր Մարարատ, ինչ եղած պիտի ըլլայ պայծառ ժամանակները: Մտնց նման կան դեռ պտղաբեր գաւառներ, ինչպէս Վողթան գաւառը, և կող լերան ստորոտները, որուն համար «արգաւանդ և հացաւէտ», կ'ըսէ կտրեհնացին, և այլ շատեր: Կօսքերնիս կնքենք հոս՝ Օ ենոր Վլակայ պատմագրութեան վերջին տողերէն Տարօնոյ գաւառին արգաւանդութեան ստորագրութիւնը բերելով. «Բայց դուք եթէ գալ կամիք յերկիրս յայտ, բարի է երկիրս, և վայրքս անուշոգ և բազմաջուր, դաշտաձև, և շուրջ զլերամբքս բազում ամրոցք: Երկիրս խոտաբեր և մեղրաբուխ. և որպէս մանանայն իջանէր յերկնից անդ առ Հրեայն, նոյնպէս և աստ՝ ի մերում երկրիս՝ ի վերայ անտառացս իջանէ քաղցր առաւել քան զմեղր՝ որ կոչի գազապէն: Եւ և այդ երկիրդ խորշակահար է և հացապակաս, և անասուն ոչ բազում՝ ի դմա. իսկ այս երկիրս ամենայն բարութեամբ լի է և աջողակ և առողջ՝»:

Հ. Ի. Կ

ՉԱՓԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉԱՓԱԿՈՍՈՒԹԻՒՆ

Տասնորդական դրոսիս չափոց ու կշռոց: (Տես երես 172)

( ) ամանեան տէրութեան մէջ գործածուած մակերևութի չափերն են քառակուսի կանգուն ճարտարապետական, արտավար կամ քէժիժ, և քառակուսի մզոն:

Վառակուսի ճարտարապետական կանգունը այնպիսի քառակուսի մըն է, որուն Թէ երկայնութիւնը և Թէ լայն-

1 Պատմութիւն Տարօնոյ, Պատճէն Բ:

նութիւնը մէկ ճարտարապետական կանգուն է. և որովհետև ճարտարապետական կանգունն է 24 սաղ փարմագ կամ մասն, ուրեմն քառակուսի ճարտարապետական կանգնոյն մակերևոյթն է 24 անգամ 24 և կամ 576 քառակուսի սաղ փարմագ, կամ Թէ 576 անգամ այնպիսի քառակուսի մը, որուն իւրաքանչիւր կողմը մէկ սաղ փարմագ ըլլայ: Երկայնութիւն ալ քառակուսի սաղ փարմագին Թէ երկայնքը և Թէ լայնքը 12 սաղըր փարմագ կամ գիծ է, որով քառակուսի սաղ փարմագին մակերևոյթն է 12 անգամ 12 և կամ 144 քառակուսի սաղըր փարմագ, կամ Թէ 144 անգամ այնպիսի քառակուսի մը, որուն ամէն մէկ կողմը մէկ սաղըր փարմագ ըլլայ: Եւ հետեւաբար քառակուսի սաղ փարմագին իւրաքանչիւր կողմն է  $\frac{1}{24}$  քառակուսի ճարտարապետական կանգնոյն կողման, և մակերևոյթն ալ է  $\frac{1}{576}$  քառակուսի ճարտարապետական կանգնոյն մակերևութին. նմանապէս քառակուսի սաղըր փարմագին իւրաքանչիւր կողմն է  $\frac{1}{12}$  քառակուսի սաղ փարմագին կողման, կամ Թէ  $\frac{1}{288}$  քառակուսի ճարտարապետական կանգնոյն կողման. իսկ մակերևոյթն ալ է  $\frac{1}{144}$  քառակուսի սաղ փարմագին մակերևութին, կամ Թէ  $\frac{1}{82944}$  քառակուսի ճարտարապետական կանգնոյն մակերևութին:

Հոս պէտք չէ շփոթել քառակուսի ճարտարապետական կանգնոյն քսանըջորսերորդ մասը քառակուսի սաղ փարմագին հետ. վասն զի քառակուսի ճարտարապետական կանգնոյն քսանըջորսերորդ մասն է 24 քառակուսի սաղ փարմագ, իսկ քառակուսի սաղ փարմագն է քառակուսի ճարտարապետական կանգնոյն 576 երորդ մասը: Երկայնութիւն ալ քառակուսի սաղ փարմագին տասուերկու երորդ մասը պէտք չէ շփոթել քառակուսի սաղըր փարմագին հետ. վասն զի քառակուսի սաղ փարմագին տասուերկու երորդ մասն է 12 քառակուսի սաղըր փարմագ, իսկ քառակուսի սաղըր փարմագն է քառակուսի սաղ փարմագին 144 երորդ մասը: